Տեխնիկական առաջադրանք Ամանորյա կորպորատիվ միջոցառման կազմակերպման նպատակով

Ծրագրի նկարագիր

«Թել-Սել» ԲԲԸ-ն հայտարարում է մրցույթ ընկերության կորպորատիվ միջոցառումը կազմակերպելու նպատակով։

Անցկացման ամսաթիվը՝ 2025թ. հունվարի 10-12, կախված առջարկվող վայրի հասանելիությունից։

Մասնակիցների սպասվող քանակը՝ 350-400 անձ։ Միջոցառման նպատակը՝

-Ամանորի տոնում կորպորատիվ միջավայրում

- 2024թ. ընթացքում Աշխատակիցների ձեռքբերումների գնահատում և խրախուսում

1. Միջոցառման հիմնական պահանջները

Թեմատիկա

- Միջոցառման համար թեմատիկ կոնցեպտի մշակում

Միջոցառման ծրագիրը առնվազն պետք է ներառի՝

- Հաղորդավար/մոդերատոր /առաջարկել առնվազն երկու թեկնածու
- Զվարճալի հատված (մրցույթներ, խաղեր, և այլն)
- Երաժշտական ուղեկցում՝ երգիչ(ուհի) կամ բենդ և DJ
- Մրցանակաբաշխության իրականացման կոնցեպտ և մարցանակների կոնցեպտ
- Ֆոտո նկարահանում / առաջարկի հետ միասին կցել լուսնակարչի պորտֆոլիա։
- Առաջարկել առնվազն երկու լուսանկարիչ։ Առաջարկի հետ միասին մանրամասն ներկայացնել լուսանկարիչների քանակը։
- Ամփոփ կարճ հոլովակ /առաջարկի հետ միասին կցել հոլովակների նմանատիպ պորտֆոլիա։ Առաջարկել առնվազն երկու թեկնածու ու մանրամասն ներկայացնել միջոցառման ընթացքում աշխատող անձնակազմի քանակը։

Միջոցառման ծրագիր

- Միջոցառման անցկցման վայրը / առնվազն երկու առաջարկ

Սննդի ապահովում

- Ֆուրշետ/նախուտեստ
- Մենյու, որը պետք է ներառի տաք ուտեստների, նախուտեստների և աղանդերի տեսականի
- Խմիչքներ՝ ալկոհոլային և ոչ ալկոհոլային
- Տոնական տորթ
- Պրոֆեսիոնալ սպասարկում

Դեկոր

- Սրահի թեմատիկ ձևավորում
- Թեմատիկ լուսանկարչական գոտի
- Բրենդավորված տարրերի առկայություն

Տեխնիկական ապահովում

- Ձայնային և լուսային սարքավորումներ
- Պրոյեկտոր կամ էկրաններ
- Այլ սարքավորումներ՝ ըստ անհրաժեշտության

Այլ

- Կայանատեղիի հասանելիություն
- Միջոցառման ժամանակացույց՝ ժամ առ ժամ։
- Միջոցառման նախապատրաստման փուլերի ժամկետները։

2. Բյուջե

- Ընդհանուր բյուջեի միջակայքը

- Բոլոր ծառայությունները պետք է ներկայացվեն մանրամասն արժեքային բաժանումով:

3. Մատակարարաի ընտրության չափանիշներ

- Նման միջոցառումների կազմակերպման փորձ (տրամադրել պորտֆոլիո):
- Հաճախորդների ցանկ կամ նախորդ կազմակերպված միջոցառումների կարճ նկարագրություն:
- Առաջարկվող սցենարի և կոնցեպտի որակ
- Ֆինանսական առաջարկ բացվածքով յուրաքանչյուր ծախսի համար